Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից գործընկեր համալսարաններ մեկնած և ՀՊՏՀ ժամանած ուսանողների հաջողված պատմություններ 2016-2017 ուսումնական տարի



Դավոր Յաչիմովիչ, *Խորվաթիայի Պուլայի Յուրայ Դոբրիլա համալսարանի ուսանող, ուսումնառել է ՀՊՏՀ-ում 2016-2017 ուս. տարվա առաջին կիսամյակում*

Տեա Անիչիչ, *Խորվաթիայի Պուլայի Յուրայ Դոբրիլա համալսարանի ուսանող, ուսումնառել է ՀՊՏՀ-ում 2016-2017 ուս. տարվա առաջին կիսամյակում*

«Էրազմուս+»-ի ծրագրի շնորհիվ մենք հնարավորություն ստացանք ծանոթանալու բոլորովին նոր մշակույթի և ապրելակերպի գեղեցիկ Երևան քաղաքում: Թեև առաջին մի քանի օրերը ցուրտ էին այս արագ տեմպերով ընթացող քաղաքում, սակայն մենք միանգամից սկսեցինք բացահայտել հայերի բարյացակամ վերաբերմունքը և, իհարկե, հիանալի հայկական խոհանոցը:

Համալսարանը մեզ առաջարկեց գիտելիքի ձեռքբերման նոր մեթոդ բաց և նորարարական դասընթացների միջոցով, որոնք վարում էին շատ ընկերական և հմուտ դասախոսները: Ուզում ենք հատուկ շնորհակալություն հայտնել արտաքին կապերի բաժնի պետ և մեր համակարգող Վարդ Ղուկասյանին և նրա օգնական Անժելիկա Մուսայելյանին առաջին օրվանից ի վեր մեզ համար ջերմ մթնոլորտ ստեղծելու և մեզ ամեն ինչով օգնելու համար:

Թեև կարճատև, սակայն անմոռանալի մի փորձառություն: Հուսով ենք, որ այն արժանի ուշադրության կարժանանա ապագայում:

Նոյեմ Ավուշյան- *Ֆինանսական ֆակուլտետ, բակալավրիատ 2-րդ կուրս*

Մերի Քոչարյան-*Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ, բակալավրիատ 3-րդ կուրս*

Դիանա Եղիազարյան- *Ֆինանսական ֆակուլտետ, բակալավրիատ 3-րդ կուրս*

Աթենքում ապրելու և ուսանելու հրաշալի փորձը այս անգամ ընձեռվեց երեքիս:

Մեզ համար մեծ պատիվ էր մեկ կիսամյակ կրթություն

ստանալ աշխարհի լավագույն հարյուրյակի մեջ ընդգրկված՝ Աթենքի բիզնեսի և տնտեսագիտության համալսարանում:

Բնակվելով արևոտ ու հյուրընկալ Աթենքում՝ ոչ միայն վայելեցինք ջերմացնող արևն ու ծովը, այլև կարողացանք ծանոթանալ նոր ու հետաքրքիր ուսանողների ու դասախոսների հետ, որոնցից ստացած փորձը ուղեկից կլինի մեզ ողջ կյանքում:

Այստեղ հնարավորություն ենք ունեցել ոչ միայն շրջագայել Հունաստանի տեսարժան վայրերով, այլ նաև փոքր-ինչ սովորել ենք հունարեն՝ բազմիցս շփվելով հույն ժողովրդի հետ:

Հավատացած ենք, որ ապագայում այս ծրագրով Աթենքում ուսում ստանալու հնարավորություն ստացած ուսանողները առավելագույնս կվայելեն հունական պայծառ ու գեղեցիկ օրերը:

Ֆինանսական ֆակուլտետի ուսանողուհի Դիանա Եղիազարյանի բլոգում զետեղված ավելի մանրամասն տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://erasmuser.weebly.com/ :

Գոհար Մաթևոսյան

Տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ

Շնորհիվ ERASMUS+ ծրագրի՝ հնարավորություն ստացա 1 կիսամյակ մասնակցել Յոսեպ Շտրոսմայերի անվան Օսիյեկի համալսարանի (Խորվաթիա) դոկտորական ծրագրին (PhD), որն ի դեպ, Եվրոպայի 20 լավագույն դոկտորական ծրագրերից մեկն է ճանաչվել: Հնարավորություններն ու բացահայտումներն իսկապես շատ են, բայց կթվեմ, ըստ իս, կարևորագույններն ու իմ ուսանող ընկերներին առավել մոտիվացնողները. բազմաթիվ հանդիպումներ ԱՄՆ-ից և եվրոպական տարբեր երկրներից հրավիրված դասախոսների, նույնիսկ դեսպանների հետ, գիտելիքներ և հմտություններ, կապեր, կապեր ու էլի կապեր… հավատացե՛ք՝ դա ամենակարևորն է: Սովորելուց բացի հասցնում ես ճանապարհորդել, բացահայտել աշխարհն ու մարդկանց, մշակույթներ և լեզուներ, մի խոսքով՝ 180*-ով փոխվում է աշխարհայացքդ:

Իսկ ինչ տվեցի ես ERASMUS +ին և ինչքանով է արդարացված իմ՝ այստեղ և հիմա լինելը... կարծում եմ՝ սա իսկապես կարևոր հարց է և հաճախ եմ մտածում այս մասին… Այս պահին կարող եմ ասել, որ աշխատում եմ այդ ուղղությամբ ու չեմ կարող չնշել մի կարևոր և ինձ համար շատ արժեքավոր փաստ, որ եթե նախկինում տեղացիներից ու միջազգային ուսանողներից քչերը գիտեին Հայաստանի մասին (հիմնականում Քարդաշյանին էին նշում), հիմա նրանք քաջատեղյակ են մեր դարավոր պատմությանը, փառահեղ մշակույթին և, իհարկե, իննովացիոն և ինտելեկտուալ պոտենցիալին, որի մասին ես և իմ 3 հայ ընկերները (Հայկազ Ֆանյան, Ռուզան Թադևոսյան և Վիկտորյա Մովսեսյան) ներկայացրինք

Հայաստանին նվիրված մեր պրեզենտացիայում (ավելի քան 70 հոգի լսարանի առջև): Նույնիսկ ճաշակեցին հայկական լավագույն կոնյակը, լսեցին Խաչատրյանի «Սուսերով Պարն» ու քամանչայի թովիչ հնչյունները.
Ահա այսպիսին է ERASMUS +ը…
Սիրելի ՀՊՏՀ, շնորհակալ եմ վստահության և ընձեռած հնարավորության համար և հուսամ՝ կարդարացնեմ Ձեր բոլոր սպասելիքները:

Մարինե Ալեքսանյան
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ

Ինչպես մենք՝ «Էրազմուս+»-ի ուսանողներս ենք ասում՝ էրազմուսը ոչ թե մի քանի ամիս է քո կյանքում, այլ քո ողջ կյանքն է՝ մի քանի ամսում:
Դեռ առաջին կուրսում էի սովորում, երբ առաջին անգամ տեսա «Էրազմուս +»-ի հայտարարությունը մեր համալսարանի ինտերնետային էջում ու շատ ոգևորվեցի. անհամբեր սպասում էի՝ երբ եմ երկրորդ կուրս փոխադրվելու, որ կարողանամ դիմել այդ ծրագրին: Ընտրեցի Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարանը, որովհետև այն ամենակայացած և հայտնի համալսարաններից մեկն է Լեհաստանում:
Չնայած կլիման այդքան էլ գոհացնող չէ մեր արևոտ Հայաստանից հետո, բայց ընկերական շրջապատն ու դասախոսական կազմը օրդ ջերմությամբ են լցնում:
Էրազմուսի շնորհիվ ես ինձ նորովի բացահայտեցի, բացահայտեցի ոչ միայն նոր մարդու այլ նաև նոր հայի: Առաջին օրերին հասկացա, որ սովորելուց զատ այստեղ մի ուրիշ պատասխանատվություն ունեմ՝ներկայացնել Հայաստանն ու նրա դարավոր պատմությունը աշխարհին, մարդկանց, որոնցից շատերը նույնիսկ չեն լսել քո երկրի մասին: «Էրազմուս+»-ի շրջանակներում գիտակցում ես, որ դու սովորական ուսանող չես, այլ հայ ուսանող, ով պարտավոր է սովորել այնպես, որ կարողանա արժանապատվորեն ներկայացնել իր ազգն ու հայրենիքը:
Այժմ ընկերներ ունեմ աշխարհի մոտավորապես 15 երկրներից, և նրանցից յուրաքանչյուրն իր փոքրիկ ներդրումն է ունեցել մտածելակերպիս զարգացման մեջ. հիմա շատ հարցերի ամբողջովին ուրիշ տեսանկյունից եմ նայում, շատ խնդիրներ ուրիշ կերպով եմ ընկալում, տարբեր երկրների մասին բոլորավին նոր գիտելիքներ ունեմ:
Իսկ դասե՞րը, դասերը անասելի հետաքրքիր են անցնում, որովհետև ամեն դասախոս ունի գիտելիք տալու իր ուրույն մեթոդը, որոնք բոլորովին նոր են ինձ համար:
«Էրազմուս +»-ը մի մեծ հաջողություն էր, որի շնորհիվ մի քանի ամսում հասցրի այնքան շատ փորձ ու գիտելիք ձեռք բերել, որը մարդկանց նույնիսկ տարիների ընթացքում չի հաջողվում ձեռք բերել:

Մհեր Վարդանյան, Ֆինանսական ֆակուլտետ՝
«Ֆինանսներ», Երկրորդ կուրս

Էրազմուս+ ծրագիրը հիանալի հնարավորություն տվեց շփվելու տարբեր ազգերի պատկանող ուսանողների և դասախոսների հետ, մասնակցելու մի շարք ակադեմիական և մշակութային միջոցառումների ինչպիսին օրինակ TEDxUHasselt-ն էր: Այս ծրագրի միջոցով ձեռք բերված փորձը անփոխարինելի է: Ավելին, ուսումնասիրելով մի քանի յուրահատուկ առարկաներ՝ կարծում եմ, որ Էրազմուս+-ը կբավարարի և՛ նրանց, ովքեր ցանկանում են ուսումնասիրել նոր մշակույթներ, և՛ նրանց, ովքեր ցանկանում են ձեռք բերել նոր գիտելիք և փորձ իրենց մասնագիտության շրջանակներում: Այսպիսով խորհուրդ եմ տալիս բոլորին:

Մարտին Մովսիսյան

Միջազգային Տնտեսական Հարաբերությունների ֆակուլտետ

Ողջույն: Ես Մարտին Մովսեսյանն եմ՝ Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի Միջազգային Տնտեսական Հարաբերություններ բաժնի ուսանող: Իմ

պատմությունը մի քիչ զավեշտալի է, բայց միևնույն ժամանակ շատ հետաքրքիր: 2015թ.-ին ՀՊՏՀ արտաքին կապերի բաժնի հայտարարությունը կարդալով՝ դիմեցի Էրազմուս+ ծրագրին, սակայն համապատասխան քնությունը չանցնելով դուրս մնացի մրցակցությունից՝ որոշելով պարապել ևս մեկ տարի: Եվ ահա 2017թ.-ին այդ նույն ծրագրով սովորում եմ Բելգիայի Հասսելտ համալսարանում(UHasselt):Հասսելտի համալսարանում ինձ հատակպես դուր է գալիս այն, որ այստեղ շեշտը դրվում է ավելի շատ պրակտիկ գիտելիքնեի վրա, քանզի գրականությունը ուսանողն ինքն էլ կարող է ուսումնասիրել: Հյուրընկալող համալսարանը կազմակերպում է բազմաթիվ մշակութային, գիտական, ժամանցային ծրագրեր գրեթե ամեն շաբաթ: Մի խոսքով, շատ ակտիվ ուսանողական կյանք կա այստեղ, ինչն, ըստ իս, պակասում է Հայաստանում:

Այժմ կարող եմ վստահ ասել, որ Էրազմուս+ ծրագրի շնորհիվ ես կարողացա ծանոթանալ շատ երկրների մշակութների հետ, ձեռք բերեցի բազմաթիվ ընկերներ տարբեր երկրներից, միևնույն ժամանակ սովորեցի ոչ միայն տնտեսագիտական առարկաներ այլ այնպիսնները, որոնք աննուղակի կերպով են ազդում տնտեսության կայունացման վրա: Հարկ է նշել, այս ամենից զատ հնարավորություն եմ ունեցել ճանապարհորդել ոչ միային Բելգիաի տարբեր քաղաքներ, այլև հարևան երկրներ: Այսպիսով, ես շատ շնորհակալ եմ ՀՊՏՀ-ից, Արտաքին

կապերի բաժնի անձնակազմից և, իհարկե, Էրազմուս+ ծրագրից ինձ այսպիսի հնարավորություն ընձեռնելու համար:

Տաթևիկ Հովհաննիսյան

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրոս

ՀՊՏՀ-ում սովորելու առաջին իսկ օրվանից հետաքրքրված եմ եղել արտասահմանում սովորելու հնարավորությամբ, քանզի վստահ եմ, որ այդ փորձը չափազանց արժեքավոր է ցանկացած ուսանողի կյանքում: Դառնալով Էրազմուս+ ընտանիքի անդամ և հնարավորություն ունենալով ուսումնառությունս շարունակել Վիլնյուսի Միկոլաս Ռոմերիս համալսարանում՝ կարող եմ վստահորեն ասել, որ սա իմ կյանքի լավագույն ժամանակաշրջանն էր: Ինչպես ասում են՝ Էրազմուսը ոչ թե կյանքի մի քանի ամիս է, այլ մի ամբողջ կյանք՝ մի քանի ամսում: Էրազմուսը հրաշալի ծրագիր է, որը մի հարկի տակ է հավաքում բազմաթիվ երիտասարդների աշխարհի տարբեր ծայրերից, հնարավորություն է տալիս սովորել և զարգանալ միասին՝ միաժամանակ ծանոթանալով տարբեր ազգերի մշակութային առանձնահատկություններին և սովորույթներին, խորացնել անգլերենի իմացությունը, ինչպես նաև սովորել նոր լեզուներ, որոնք սովորելու հնարավորություն նախկինում չես ունեցել: Ունենալով ժամանակի պահանջներին համահունչ լսարաններ և գրադարան՝ Միկոլաս Ռոմերիս համալսարանը դարձավ այն վայրը, որտեղ ես ձեռք բերեցի նոր գիտելիքներ, հնարավորություն ունեցա պրակտիկորեն կիրառել դրանք, ուսացման ճիշտ մեթոդների շնորհիվ զարգացրի թիմում աշխատելու կարողությունս: Ակտիվորեն ներգրավված լինելով համալսարանի միջազգային գրասենյակի կողմից առաջարկվող միջոցառումներին՝ հնավորավություն եմ ունեցել նաև մասնակցել մի շարք բաց դասախոսությունների, սեմինարների, կամավորական ծրագրերի և այցելությունների դեպի Լիտվայի պառլամենտ, նախագահական նստավայր, Կենտրոնական բանկ, մի շարք ֆինանսական կառույցներ: Սակայն չեմ չափազանցնի, եթե շեշտեմ, որ ստացածս գիտելիքներից էլ ավելի արժեքավոր էր այն ժամանակը, որը ես անցկացրել եմ իմ ընկերների հետ՝ ճանապարհորդելով և բացահայտելով Եվրոպայի հնագույն և ժամանակակից քաղաքները, մասնակցելով բազմաթիվ միջմշակութային և ժամանցային միջոցառումների ու մրցույթների և պարզապես շրջելով հեքիաթային Վիլնյուսի փողոցներով:

Իմ Էրազմուսի փորձառության ավարտին մնում են հաշված շաբաթներ: Թեև արդեն կարոտում եմ այս ամիսները, սակայն նաև շտապում եմ վերադառնալ՝ ստացած գիտելիքներս ի նպաստ Հայաստանի զարգացմանը կիրառելու համար:

Դավիթ Մալխասյան, *Հաշվապահական հաշվառման ֆակուլտետ, մագիստրատուրա, 1-ին կուրս*

«Էրազմուս+» փոխանակման ծրագիրը եզակի հնարավորություն է ընձեռում ճանաչելու աշխարհը, զարգանալու որպես մասնագետ և որ ամենակարևորն է ՝ որպես անհատ: Անհերքելի է, որ Erasmus-ը փորձ է ամբողջ կյանքի համար <<Once Erasmus, Always Erasmus>>: Սովորելով Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում գտնվող SGH Warsaw School of economics համալսարանում՝ հնարավորություն ստացա զարգացնել տնտեսագիտական գիտելիքներս և ձեռք բերել փորձ: Թեկուզ կարճ ժամանակով, բայց հնարավորություն ստացա ուսանել եվրոպական ակադեմիական մեթոդներով:

Ոչ պակաս կարևոր հանգամանք է հարյուրավոր ուսանողների հետ շփումը աշխարհի տասնյակ երկրներից: Դա հնարավորություն է ընձեռում շփվել և ճանաչել մշակույթները, ինչն, անշուշտ, օգտակար է և՝ որպես անհատ և՝ որպես տնտեսագետ: Եվ հետևաբար՝ ընկերներ , ծանոթներ ու կապեր ամբողջ աշխարհում:

Ինձ համար կարևոր էր նաև այն, որ բախտ վիճակվեց հանդիպել մարդկանց, ովքեր իրենց հաջողություններով ու ձեռքբերումներով օրինակ են յուրաքանչյուր երիտասարդի համար: Հնարավորություն ունեցա հանդիպել Լեհաստանում ՀՀ Արտակարգ և Լիազոր դեսպան Էդգար Ղազարյանին, Ավստրալիայի նախկին վարչապետ Թոնի Էբբոտին, Բրազիլիայի դեսպան Ալֆրեդ Լեոնիին, մի շարք բիզնեսմենների, ովքեր իրենց հաջողություններով մոտիվացնում են երիտասարդներիս:

Աննա Ազատյան

ՀՊՏՀ-ի Եղեգնաձորի մասնաճյուղ,

Ուսումնառել եմ Միշկոլցի համալսարանի Տնտեսագիտական ֆակուլտետում: Ուզում եմ կիսվել տպավորություններովս և ասել, որ Էրազմուս+ ծրագիրը տվեց մեծ հնարավորություն

արտերկրում սովորելու, ավելացնելու և զարգացնելու մասնագիտական գիտելիքներս, բարելավելու անգլերենը: Այդ ծրագրի շնորհիվ ես ձեռք բերեցի շատ ընկերներ մի շարք երկներից, ծանոթացա տարբեր երկրների մշակույթներին և սովորույթներին, ինչպես նաև ճանապարհորդեցի մի քանի երկրներ և եղա շատ ու շատ քաղաքներում: Այդ ծրագիրը ինքնահաստատվելու մեծ հնարավորություն է տալիս այն ուսանողներին, ովքեր դիմում են այս ծրագրին և որևէ

արդյունքի հասնում: Ես ձեռք բերեցի մեծ փորձ իմ հետագա ամբողջ կյանքի համար, ինչն անհրաժեշտ է յուրաքանչյուր ուսանողի:

Աննա Ղորուխչյան

Կառավարման ֆակուլտետ, մագիստրատուրա 1-ին կուրս

Ողջու՛յն: Ես Աննան եմ: 2016-2017թթ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում սովորել եմ ՀՊՏՀ գործընկեր Միշկոլցի համալսարանում (Հունգարիա): Նախ պետք է նշեմ, որ հունգարացիներն էլ հայերիս նման շատ հյուրընկալ ու ջերմ ազգ են, պատրաստ յուրաքանչյուր պահի օգնելու դիմացինին, ինչի շնորհիվ շարժունությանս առաջին իսկ օրերից ինձ զգացել եմ ինչպես հայրենի երկրում: Միշկոլցի համալսարանում ուսուցանելը հնարավորություն է տվել խորացնել գիտելիքներս տնտեսագիտության ոլորտում, ինտերակտիվ մեթոդներով անցկացվող դասերի ընթացքում ձեռք եմ բերել բազմաթիվ նոր հմտություններ, օտարերկրյա ուսանողների ու դասախոսների հետ մտքերի ու կարծիքների փոխանակման արդյունքում սովորել եմ հասկանալ ու ընդունել դրանք, ընդլայնել աշխարհայացքս ու պատկերացումներս: Արտերկրում սովորելու ողջ ընթացքում զգացել եմ նաև հարազատ բուհիս աջակցությունը՝ ի դեմս արտաքին կապերի բաժնի աշխատակիցների: Եվ, ամենակարևորը, ձեռք եմ բերել լավ ընկերներ, որոնց մոտ ապագայում կտեսնեմ նաև Հայաստանում:

Այնպես որ, եթե դու էլ ես ցանկանում անցկացնել քո ուսանողական կյանքի մի քանի ամիսները նոր միջավայրում, ունենալ անմոռանալի տպավորություններ, ձեռք բերել նոր գիտելիքներ, խորացնել անգլերենիդ իմացությունը և, ի վերջո, ճամփորդել ընկերներիդ հետ՝ բացահայտելով այլ երկրների մշակույթն ու առօրյան, ապա անպայման դիմիր ծրագրին և փորձիր ուժերդ:

Հայկարամ Դրմեյան

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ, 2-րդ կուրսի մագիստրոս

Արդեն բավական ժամանակ է ինչ սովորում եմ Խորվաթիայի Պուլա քաղաքի Ջուրայ Դոբրիլա համալսարանի «Ֆինանսներ և տուրիզմ» ֆակուլտետում: «Էրազմուս+» ծրագիրը հնարավորություն է տվել սովորել նոր միջավայրում և նոր մեթոդներով: Առավելությունն այն է, որ այստեղ մեզ դասավանդում են միայն պրոֆեսորներ,

հասանելի է բավականին լավ և թարմացված գրականություն՝ գրված Հարվորդի եւ Օքսֆորդի համալսարաններին դասախոսների կողմից: Համոզված եմ, որ այս մի քանի ամիսը լավ հնարավորություն է նաեւ լեզվի իմացությունը բարելավելու համար: Բնականաբար նոր միջավայրը, լավ մասնագետները, նոր ընկերները և կապերը, ճամփորդությունները լրացուցիչ փորձ և հմտություններ են հաղորդում, որը կարելի կլինի կիրառել հետագայում: Հայաստանում բավականին երկար չարչարվեցինք ՀՊՏՀ արտաքին կապերի բաժնի աշխատակիցների հետ՝ վիզայի հետ կապված խնդիրները լուծելու համար, բայց համոզվեցի, որ արժեր: :) Շնորհակալություն ՀՊՏՀ-ին՝ այս հնարավորությունը ընձեռելու համար:



Մարգարիտ Մարուքյան, *ՀՊՏՀ Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի ասպիրանտ*

Փոխանակման ծրագրի ընթացքում ես շարունակել եմ իրականացնել հետազոտություն կրթության որակի և ուսանողների սպասումների վերաբերյալ (որն իմ թեկնածուական ատենախոսության բաղկացուցիչ մասն է կազմում)՝ փորձելով նույն հետազոտությունն անել Հունգարիայում, ինչն արել եմ ՀՀ-ում՝ համեմատական վերլուծության համար: Որպես այս փորձառության առանցքային գործոն՝ կարևորում եմ նոր ակադեմիական միջավայրը և դասավանդման մեթոդները. ասպիրանտական կուրսերում դասընթացների կարևոր մասն են կազմում քննարկումները: Դասախոսը նախապես տրամադրում է դասախոսության նյութերը, և ուսանողներից որևէ մեկին հաձնարարվում է ներկայացնել է թեման, հիպոթեզը ամբողջությամբ՝ սկսած դրանում արծարծվող տնտեսական կատեգորիաների մեկնաբանություններից ընդհուպ դրա քննադատությունը: Ներկայացման ավարտին դասախոսը լրացումներ է կատարում, ասպիրանտներն ուղղում են իրենց հարցերը բանախոսին և քննարկում է ծավալվում տվյալ թեմայի շուրջ: Սա իրապես հիանալի փորձառություն էր՝ անձնային և մասնագիտական զարգացման առումով:

Ալբերտ Հովհաննիսյան, *Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի մագիստրոս*

Այս փորձառությունը գերազանց հնարավորություն է ուսանողների համար ոչ միայն նոր ակադեմիական միջավայրում ուսումնառության, այլև միջմշակութային հաղորդակցության առումով. իմ մագիստրոսական կուրսում սովորում են ուսանողներ աշխարհի տարբեր երկրներից: Բացի դասընթացների ընթացքում քո երկրում տվյալ իրողությունը մեկնաբանելուց, հաճախ ուսանողները միմյանց պատմում են իրենց մշակույթի, իրենց երկրի առանձնահատկությունների մասին, որը բացի հետաքրքիր լինելուց, նաև օգտակար է որպես անհատ զարգացման առումով: Համալսարանը բավական լավ զարգացած ենթակառուցվածքներ ունի և այնպիսի միջավայր է ստեղծում, որտեղ սովորելը հետաքրքիր և հաճելի է:

Ինեսսա Սիմոնյան

Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ

Ես Ինեսսա Սիմոնյանն եմ: Ավագ դպրոցում սովորելիս հստակ որոշել էի, որ պետք է սովորեմ արտասահմանում, ինչն ինձ կօգնի խորացնել սովորելու հմտություններս և մեծ փորձառություն կտա, որն էլ կլինի հիշողություն ամբողջ կյանքի համար: Երբ դարձա Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանող, տեղեկացա, որ համալսարանը համագործակցում է «Erasmus +» ծրագրի հետ, ուստի հասկացա, որ դա հենց այն հնարավորությունն է, որ ես փնտրում էի: Դիմեցի ծրագրին և այժմ ես Վառնայի կառավարման համալսարանի ուսանող եմ:

Այս համալսարանում սովորելու ընթացքում ես ձեռք եմ բերել մեծ փորձառություն, որով կցանկանայի կիսվել ձեզ հետ: Նախևառաջ ես շատ հավանեցի կրթական համակարգը, քանի որ դասերի միջոցով ձեռք եմ բերել գործնական գիտելիքներ՝ զուգահեռներ անցկացնելով իրական կյանքի և տեսությունների /թեորիաների/ միջև: Ուսումնառելով արտասահմանում՝ ձեռք բերեցի շատ ընկերներ և նոր ծանոթություններ: Այս

փորձառությունն օգնել է ինձ ընդլայնել իմ մտահորզոնը, փոխել մտածելակերպս և իրականության նկատմամբ դիտարկումները, որից հետո ես սկսել եմ նկատել չնչին, բայց միևնույն ժամանակ նաև շատ կարևոր բաներ, ինչը նախկինում անհնարին էր տեսնել: «Erasmus +» ծրագրի շնորհիվ ես այժմ ունեմ տարբեր ազգության շատ ընկերներ, և այս փորձառությունը մեզ՝ Erasmus-ի ուսանողներիս, կօգնի ոչնչացնել մեր մշակույթների մեջ գոյություն ունեցող պատնեշները: Եվ վերջապես, արտասահմանում ուսումնառությունն օգնեց ինձ ինքնուրույն լինել. այս փորձը ևս մեկ համարձակ քայլ էր իմ հասունության համար: Այն սովորեցրեց ինձ հավատալ սեփական ուժերին, քանի որ ջանասեր աշխատանքի շնորհիվ կարող ես հասնել ամենադժվարին նույնիսկ. ամենակարևորը՝ սեփական ուժերիդ հավատալն է:

Գևորգ Պետրոսյան

Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ

Բարև ձեզ: Սովորում եմ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի 2-րդ կուրսում: Տեղեկանալով Էրազմուս+ ծրագրի մասին՝ միանգամից նպատակս եղավ դառնալ այդ մեծ ընտանիքի անդամը: Առաջին իսկ փորձից ես հասա հաջողության: Մինչ իմ արտերկրում ուսանելու մասին խոսելը, կցանկանայի շնորհակալական խոսքեր հղել ՀՊՏՀ-ին և նրա անձնակազմից, մասնավորապես մեր թև ու թիկունք՝ արտաքին կապերի բաժնին:

Երբեք չէի եղել Եվրոպայում և դա իմ մեծ երազանքն էր: Բայց ով կմտածեր, որ ես առաջին անգամ կհայտնվեմ Եվրոպայում ուսանողի կարգավիճակում: Եվ դա իրականացավ 2016/2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում և ես հայտնվեցի Վառնայի կառավարման համալսարանում: Հանդիպեցի մոտ 40 երկրի ներկայացուցչի, ովքեր ունեին տարբեր մշակույթներ, ավանդույթներ, կրոններ: Ստեղծեցի մեծ ընկերական միջավայր, ում հետ կապը կպահպանվի միշտ, քանզի նրանք իրենց հետ տարել են իմ հոգու մի փոքր մասնիկ: Բուլղարիան ցույց տվեց իրեն իր ամենաշքեղ կերպարանքներով: Վայելեցի Բուլղարիայի քամոտ և անձրևոտ գարունը և հասցրեցի վայելել նաև նրա արևոտ և գրկաբաց ամառը: Համալսարանի անձնակազմը պրոֆեսիոնալ էր, և բոլոր դասախոսները տիրապետում էին անգլերենին:
Կկարոտեմ այդ ժամանակաշրջանը, որը ամենալավն էր իմ կյանքում:
Սիրով Գևորգ Պետրոսյան

Ռուզան Թադևոսյան

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, ասպիրանտ

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում հյուրընկալվել եմ Յոզիպ Յուրայ Ստրոսմայերի համալսարանում (Օսիյեկ, Խորվաթիա): Ծրագիրն ինձ հնարավորություն է տալիս հարստացնել ինչպես մասնագիտական, այնպես էլ աշխարհընկալման և ընդհանրական գիտելիքներս: Միաժամանակ այն նպաստում է բնավորությանս որոշ գծերի փոփոխությանը, օգնում է ինձ դառնալ ավելի ինքնավստահ, քանի որ ընտանիքից հեռու լինելով՝ ստիպված ես դժվարությունները միայնակ հաղթահարել և ապավինել միայն սեփական ուժերիդ: Ինչ վերաբերում է մասնագիտական գիտելիքներին, ապա դրանք օգնում են ինձ ատենախոսությունս գրելու հարցում և հետագայում էլ դրանք կարող եմ լայնորեն կիրառել աշխատանքային գործունեության ընթացքում: Ծրագիրը նաև տալիս է բազմազգ ուսանողների հետ շփման հնարավորություն, որն էլ իր հերթին լավ առիթ է տարբեր ազգերից ընկերներ ձեռք բերելու, նրանց մշակույթը յուրացնելու և նոր լեզուներ սովորելու համար: Այս ամենին էլ եթե գումարենք ազատ օրերին ճամփորդության հնարավորությունը (ինչպես գիտենք դա միակ բանն է, երբ մենք փող ենք ծախսում, բայց այն մեզ հարստացնում է), ապա կարելի է մեկ բառով բնորոշել, որ այս ծրագիրը պարզապես ՀՐԱՇԱԼԻ է:

Վիկտորյա Մովսեսյան

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ, ասպիրանտ

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում հյուրընկալվել եմ Յոզիպ Յուրեյ Ստրոսմայերի համալսարանում(Օսիյեկ, Խորվաթիա): Ես այստեղ հնարավորություն եմ ստանում ընդլայնելու և ավելի խորքային ուսումնասիրելու այն հիմախնդիրները, որոնց շրջանակներում լինելու է իմ թեկնածուական աշխատանքը: Ինչպես նաև հնարավորություն է ընձեռվում համագործակցել իրենց գործին հրաշալի տիրապետող մասնագետների հետ, որոնք ուղղորդում են, տրամադրում են բազմահազար գրականությունից օգտվելու թույլտվություն: Ծրագրի շրջանակներում ծանոթանում ենք երիտասարդների հետ, որոնք տարբեր մշակույթների, մտածելակերպի,

ապրելաձևի կրողներ են, բայց նրանք բոլորը ունեն մեկ ընդհանրություն, որն է սովորել ու քաղել նորանոր գիտելիքներ և ստեղծել նոր կապեր: Էրազմուս + միջոցով կարելի է հաճելին համատեղել օգտակարի հետ, որն է բացահայտել Եվրոպական երկրները, տեսնել տարբեր երկրների ճարտարապետությունը, ուսումնասիրել զարգացվածության մակարդակը և այլն: Շնորհակալություն



Անի Մանուկյան

Կառավարման ֆակուլտետ

Լինել «Էրազմուս»ի ուսանող, նշանակում է ապրել ուրիշ կյանք: Այն ինքնուրույն և ինքնավստահ լինելու ժամանակն է նաև: Ընդամենը մեկ կիսամյակի ընթացքում ես ստացա և՛ ընդհանրական, և մասնագիտական գիտելիքներ: Յուրաքանչյուր Էրազմուսի ուսանող հնարավորություն է ստանում սովորել մի օտար լեզու, որի մասին երբեք նա չէր մտածել: Կարճ ժամանակ անց պատրաստ կլինես համեմատելու կրթական համակարգերը, և այն կօգնի քեզ գնահատել քո սեփական համալսարանի կրթական համակարգը՝ միևնույն ժամանակ տալով նոր գաղափարներ դրա բարելավման համար: Նաև երաշխավորված է, որ կհանդիպես բազմաթիվ հաճելի մարդկանց, ովքեր կդառնան հարազատ քեզ համար: Այսպիսով, Էրազմուս-ը գիտելիք է, իրական կյանք, ընկերություն և լավ հիշողություններ ամբողջ կյանքի համար: